

«Արթնցայ արշալոյսին, զոր *Վարդամատն* կ'անուանեն դասականք, եւ հազայ հագուստներս, որք տձեւութիւն ծածկելու միայն ծառայելու են, կ'ըսէ Ժան - Ժաք Ռուսօ, եւ կերայ քիչ մը հաց, թէպէտեւ Աւետարանը կ'ըսէ, թէ «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ բանիւ Տեառն»:

Ինչո՞ւ համար մտքին ուղղութեանը դէմ ապստամբիլ եւ ընթերցողներդ չարչարել, ո՛ր Ատոմա. շիտակ ճամբադ գնա. ի՞նչ հարկ կայ ամեն քայլափոխիդ մէջ՝ մէկ հեղինակի դուռն ափ առնելու:

3 Հոկտեմբեր

Լրագրի մը մէջ կարդացի հետեւեալ տողերը.

«Եթէ կղերին թերութիւնները գրել հարկ ըլլայ՝ հատորներ կը լինին»:

Իրաւունք տուի այս մարդուն. ես ալ փորձած եմ, որ եթէ կղերին առաւելութիւններն գրել հարկ ըլլայ՝ երկու տող չեմ կրնար լեցունել:

Մայրաքաղաքիս մէջ գտնուող վարդապետներն, որք միշտ *Հայրենիք*, *Հայրենիք* պօսան՝ հիւանդութիւն կ'ունենան՝ երբ Հայաստանի մէկ գաւառէն առաջնորդ ընտրուին:

Կը հրաժարուիմ յականէ յանունէ զանոնք հոս յիշել:

Ասոնք միշտ հոս մնալ կ'ուզեն. Վոսփորին երկու եզրերուն վրայ կ'փափաքին ծառայել Հայաստանին:

Ափսո՛ս, քիչ հայ կղեր ունինք, որ *նօսթալժի* ունենայ...:

4 Հոկտեմբեր

Վաճառականի մը պարկերուն մէջէն հակ մը *Մշակ* լրագիր գտնուած եւ մաքսատունէն արգելուած է, որովհետեւ Օսմ. կառավարութեան բարենորոգումներուն վրայ կծու յօդուածներ կը պարունակէ եղեր:

Հոս մտնել ուզող լրագիրները բարենորոգման վրայ խօսելու չեն, վասնզի շատ դժուար է Թուրքիայի մէջ բարենորոգում մուծանելը. մաքսատունէն անմիջապէս կ'արգիլուի իբրեւ վնասակար ապրանք:

5 Հոկտեմբեր

Ազգային ընկերութիւններն, առանց բացառութեան, աշխուժիւ եւ եռանդամբ կը գործեն: